

ձեռք» կը ստանայ 1617ին էջմիածնի Թ. 801
Հարանց վարքը:

7. Խաչատուր գրիչ 1619ին կ'օրինակէ
Աւետարան մը «ի յերկիրս Մաջանջուխու ի
գիւղս Տանձաւէրի»⁸:

8. Նոյն Խաչատուր 1620ին կ'օրինակէ
ուրիշ Աւետարան մ'ալ «ի յերկիրն Ղափանու
ի գիւղն որ կոչի Տանձէվէր» տէր Յակոբի
համար⁹:

9. Մելքիսեթ երէց 1621ին կ'օրինակէ
Մաշտոց մը «ի ժամանակս մեծ բարունապե-
տին մեծին Մովսէսի եւ Սարգիս պարոնտէր
հօր»¹⁰:

10. Սարգիս աշխարհական ի Խոտանան
կ'օրինակէ «հրամանաւ տէր Ռըստակէսի ի
խնդրոյ տէր Յակոբին» Սաղմոսարան մը,
որուն մէջ կը խնդրէ յիշել «գտէր Ռըստա-
կէսն որ էր հայր Անապատին Տանձայփարա-
խոյ եւ գտէր Յակոբ ժամարար նորին»¹¹:

11. Նոյն Սարգիս աշխարհականն է նաեւ
էջմ. Թ. 2635 Կանոնադրոց գրիչը, գրած նոյն
տեղ ի վայելումն Տաթեւի Յովհաննէս եպիս-
կոպոսի:

12. Ղաղար քահանայ «նօտարն մեծի
հայրապետին Մովսէսի» կ'օրինակէ էջմիածնի

⁸ Թովմեան՝ Յուլիական հայ. ձեռագրաց Դաղեան
Խաչիկ վարդապետի, էջ 55. համտ. Ալիշան, Սիսա-
կան, էջ 282:

⁹ Ձեռ. էջմ., 293:

¹⁰ Թովմեան, անդ, էջ 47:

¹¹ Ա. Վ. Համամեան, Յուլիական հայ. ձեռ. Գաղա-
տիոյ, Թ. 35: